

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան դիմել 10 րուբլ, կես տարեկան 6 րուբլ:

Ուսանողի համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացի դիմում են ուղղակի

Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը լաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիգուով:

Յայտարարութիւնների համար վճարում են

խրատանկիւր րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Էջմիածնի ձեմարանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Սղեանից: Ներքին լուրերը.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Քերթերը և չէյի իբէղուլաւ: Նամակ թիւրքիայից: Արտաքին լուրերը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՄԱՐԱՆԸ

Մի քանի շաբաթ սրանից առաջ թէ Թիֆլիսում և թէ գաւառներում բոլոր խօսակցութեան առարկան Էջմիածնի ձեմարանն էր: Այդ ձեմարանի մէջ հրաւիրուեցան նոր վերատեսուէչ, ընկտօր, և նոր ուսուցիչներ. բոլորն էլ ահագին ուժիկներով: Այդպէս, օրինակ, տեսուչը ստանում է 5000 րուբլ, ուսուցիչները 4000 րուբլ, 3000 րուբլ, 2000 րուբլ տարեկան, չը հաշուած ձանապարհի ծախսը:

Մենք չենք խօսի այն բանի վրա թէ որքան ազնիւ կամ անազնիւ է մեր ուսուցիչների և տեսչի կողմից պահանջել այդ տեսակ ահագին ուժիկներ կոպեկներով հաւաքած ազգի փողերից: Մենք կը նայենք միայն այդ երեւոյթի վրա երկու տեսակէտից. նախ՝ արժանի են արդեօք հրաւիրվածները այդ տեսակ ահագին ուժիկների և երկրորդ՝ ի՞նչ ազդեցութիւն կունենայ ձեմարանի տեսչի և վարժապետներին այդ տեսակ հրէշաւոր ուժիկների նշանակելը և մեր միւս ազգային դպրոցների տեսուչների և ուսուցիչների վրա:

Ամենքին յայտնի է որ ոչ մի համալսարանի պրոֆէսորներ հինգ հազար րուբլ ուժիկ չեն ստանում: Պէտք է ընդունել, ուրեմն, որ պ. պ. Նահապետեան, Մանգիւնեան և այլն, ամենտերեւելի գիտնականներ են, մի կօստամարովից, մի Նլովայսկուց, մի Ուշինսկուց, մի Սեչենովից, մի Մենդելեւից բարձր....

Ամենքը լսել են նոյնպէս որ մի ակադէմիայի, մի համալսարանի ընկտօր կամ պրոֆէսոր դառնալու համար, հարկաւոր է գտնել մի որ և է ուսումնական գրուածքով յայտնված լինել: Մի ակադէմիայի ընկտօր ընտրվում է առհասարակ ոչ թէ միայն գիտութեան մէջ յայտնի մի անձնաւորութիւն, բայց և մի մարդ որ նշանաւոր է իր բազմակողմանի հմտութիւններով, որ պէս զի այդ ուսումնական կարողանայ ոչ թէ միայն պօլիցիական, կարգապահական պաշտօնը կատարել բարձրագոյն դպրոցում, այլ ուղղութիւն տալ ձեմարանի ընդհանուր ուսումնական գործին:

Այդ տեսակ պաշտօնների վրա գիտնականները հրաւիրվում են, առհասարակ, մրցողական գրուածքներ ներկայացնելով, իրանց ծրագրով հանգերձ, որի մէջ յայտնում են իրանց հայեացքը դպրոցի ուսումնական ընթացքի վրա: Նոյնը և այս կամ այն առարկայի պրոֆէսորների վերաբերութեամբ:

Մենք կը հասկանայինք որ ընկտօրի կամ պրոֆէսորների պաշտօնների վրա հրաւիրվելին այնպիսի յայտնի գիտնականներ, ինչպէս Էմին, Պատկանեան, Այսաբեկեան, Սրուստեան, Հիսարեան, մինչև անգամ

Շահադիգեան, որոնք յայտնի են իրանց գիտնական թէ բանաստեղծական գրուածքներով, իրանց մանկավարժական երկարամեայ փորձով, իրանց գրականական աշխատութիւններով: Նրանցից ոչ ոքին երբեք ոչ չէ հրաւիրել, բայց հրաւիրում են մի Նահապետեանին, որ ոչինչով յայտնի չէ, այն էլ ահագին, չը լսված ուժիկով:

Մենք կրկնում ենք, որ ոչ Պատկանեան, ոչ էլ Էմին երբեք իրանց պրոֆէսորութեան ժամանակ այդ տեսակ ուժիկներ չեն ստացել: Բայց ասենք թէ մայրաքաղաքի կենսաբան դրվիլու և հեռու վարժապետ գնալու համար, մտաւոր և բարոյական մի քանի զրկանքների համար, հարկաւոր է վարձատրվել գտնել նիւթական միջոցներով: Բայց հարցնող լինի՝ մի Նահապետեան, մի Ներսիսեան դպրոցի ուսուցիչ, մի անային վարժապետ, մի հասարակ համալսարանական մարդ, որի նմանները հարկւրներով կան այժմ մեր ամեն մի քաղաքում, ի՞նչ գիտնական աշխատանք էր արդեն արեւելում Թիֆլիսում նստած, որ զրկվելով Թիֆլիսից, նա պէտք է իրան վարձատրի ահագին ուժիկով, որովհետեւ իր բացակայութեամբ զրկում է գիտութիւնը, համալսարանը, բարձրագոյն դպրոցը իր ուսումնական աշխատանքներից, զրկում է գիտութիւնը իր հետազոտութիւններից.... Մի գիտնականի համար թողնել մայրաքաղաքը, նշանակում է վերջ տալ իր ուսումնական աշխատութիւններին. նրան հարկաւոր են՝ կայսերական գրադարանը, հարուստ թանգարաններ, ուսումնական շրջան մի որ և է զրկված արդիւնաբերելու համար: Այդ տեսակ մարդու համար թողնել մայրաքաղաքը և գնալ վարժապետի պէս մի յետ ընկած տեղ, նշանակում է գնալ անապատ, վերջ տալ իր գիտնական հետազոտութիւններին. պարզ է որ նա կուզենայ վարձատրել իրան գտնել մեծ ուժիկով: Բայց եթէ Նահապետեանը հինգ հազար է ստանում, ի՞նչ պէտք է ստանային, օրինակ, Այսաբեկեան, Էմին, կամ Պատկանեան,—երեւի քանի հազար րուբլ տարեկան:

Մենք ունենք այժմ բազմաթիւ, թէ և ասենք փոքրիկ աշխատողներ, ազգային կրթութեան ասպարիզում, որոնցից մի քանիսն գրողներ են, միւսները վարժապետներ կամ տեսուչներ, մի քանիսն բարձրագոյն ուսում են ստացել և ոչինչով պակաս չեն Նահապետեանից, իսկ գուցէ բարձր են նրանից, նրա պէս համալսարանական դիպլոմ ունեն, աւելի ոչինչ, միւսները, թէ և համալսարանական դիպլոմ չունեն, բայց կարճ ժամանակում յայտնվել են հասարակութեան մէջ, որպէս գրողներ, մատենադիրներ: Մենք ունենք Բարսեղաբեկեան, մանկավարժ և Շիլլերի թարգմանող, ունենք Պալասան, մանկավարժ և նոր քերականութիւն մշակող, ունենք Բաֆֆի, լաւ հայագետ և յայտնի գրող, ունենք բազմաթիւ բարձր ուսում ստացած ուսուցիչներ և տեսուչներ Արիստոմ Գովհանիսեան, Գիւնեան, Ժողովրդական գրողներ Աղայեան, Գիւնեան: Այդ բոլոր մտաւոր մշակները,

մենք հաւատացած ենք, շատ բնական կը գտնեն, եթէ Էմին, Սրուստեանց, Այսաբեկեան, կամ Պատկանեան հրաւիրված լինին ակադէմիայի ընկտօրի պաշտօնի վրա և ստանային հինգ հազար րուբլ ուժիկ: Նրանք մեծ յարգանքով կը խոնարհվէին այդ երեւոյթի առջև: Բայց այդ մեր բոլոր յիշվածները ի՞նչ պէտք է մտածեն, տեսնելով որ Նահապետեանի պէս մի մարդ, որ նրանցից ոչինչով բարձր չէ, այլ ընդհակառակն, այն էլ չունի ինչ որ իրանք ունեն, այսինքն գրականական անուն, հրաւիրվում է ընկտօր ձեմարանի հինգ հազար րուբլ ուժիկով: Պարզ է որ այդ տեսակ երեւոյթը տեսնելով գանգաւ Բարսեղաբեկեանի, Պալասանի, Արիստոմ Գովհանիսեանից և հազար ու մի գաւառական տեսուչներ ու վարժապետներ, որոնցից շատերը բարձր ուսում ստացած են Նահապետեանի պէս, կը մտածեն, եթէ նա հինգ հազար է ստանում, մեզանից ոչինչով բարձր չը լինելով, ինչի մէջ էլ չը պահանջենք դպրոցների հոգաբարձուներից մեր ուժիկների աւելացնելը.... Եւ կատարեալ իրաւունք կունենան Այսաբեկեան կատարեալ դէմօր աւելցնելու կը մտնի մեր բոլոր դպրոցներում, և ուսուցիչների ու տեսուչների վարձը շատ կը թանկանայ:

Ամենքը հասկանում են որ եթէ մի Էմին ահագին ուժիկով ընկտօր է հրաւիրվում, այդ նրա գիտութեան, նրա գիտնական անուն համար է, բայց բոլորն էլ շատ լաւ գիտեն որ Ներսիսեան դպրոցի երէկվայ տեսուչ և անային վարժապետ Նահապետեան, մի օրվայ մէջ գիտնական չի դառնայ միայն դրանով, որ այսօր ընկտօրի անուն է կրում:

Հրաւիրել ձեմարանի մէջ ամենամանջան մարդկանց այդ տեսակ ահագին ուժիկներով, ամենալաւ միջոց է մահվան հարուած տալ մեր բոլոր մնացած գաւառական դպրոցներին և մինչև անգամ նպաստել նրանց փակմանը: Մի՞թէ դա է Էջմիածնի ձեմարանի նպատակը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՍՂԵԱՆԻՑ

Հոկտեմբերի 5-ին

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ այստեղ հիմնվեցաւ և մի կուբ Ազնուական կուբը անունով, ուրեմն այժմ ունենք երկու կուբ՝ Քաղաքային և Ազնուական: Քաղաքային կուբի անդամները մեծ մասը հայեր են, իսկ Ազնուականի՝ վրացիներ: Բայց այս երկու կուբերից ոչ մէկը չէ ծառայում իր բուն նշանակութեանը. եթէ դուք մտնէք այս կուբերից մէկում կամ միւսում՝ զարմացած կը մընաք: Գուցէ կը տեսնէք անդամներին կանաչ սեղանի շուրջը նստած թուղթ խաղալիս, միւսներին բլիւզաւոր խաղալիս, իսկ երրորդներին դատարկ խօսակցութիւններով պարագլխաւ իսկ ընթերցարանում կամ չէք տեսնի ոչ մէկին լըրագիր կարգալիս և կամ եթէ կը տեսնէք, այն էլ երկու կամ երեք մարդ: Քաղաքային կուբում ստացվում են հայերէն լրագիրներից «Մշակ», «Մեղրու», և «Փարոս Հայաստանի», բայց

սրանց կարդացողները չափ քիչ կան, երկու կամ երեք մարդ են կարդում միայն՝ չը նախելով որ սղեանցիները հայերէն բաւականաչափ են հասկանում, բայց արդեօք սիրում են այդ լեզուն, աշխատում են դրան առաջ տանել, կրթում են իրանց որդեղը այդ լեզուով, ուղարկում են նրանց հայոց ուսումնարան—ոչ, Հայոց ուսումնարանում գտնվում են միայն աղքատ զաւի որդիքը, որոնք չեն կարողանում քաղաքային ուսումնարանում տարեկան 8 րուբլ նշանակած ուսման վարձը վճարել: Մինչև այժմ քաղաքային ուսումնարանում ուսման տարեկան վարձը 5 րուբլ էր, բայց ուսումնարանի վարչութիւնը տեսնելով տեղացոց անտարբերութիւնը դէպի հայոց ուսումնարան— ուսման վարձը աւելացրեց: Միւս անգամ աւելի մանրամասն կը խօսեմ հայոց և քաղաքային ուսումնարանների վրա:

Մեր խօսքը կուբի մասին էր: Այստեղ կուբը կարծում են մի հիմնարկութիւն, որտեղ կարելի է թուղթ խաղալով ժամանակ անցկացնել: Խորհուրդ կը տայինք երկու կուբի անդամներին միմյանից դարձեալ, ունենան մի կուբ շատ անդամներով, կազմին մի ոյժ, որովհետև այսպիսի գաւառական քաղաքների համար բաւական է մի կուբ, թողնեն այն շուրջ ծախսերը, որ անում են թղթախաղի մէջ և աննպատակ վատնում են փողերը, զբաղվեն ազգօգուտ գործերով, օգնեն ազգին, որը օգնութեան կարօտ է, առաջ տանեն ուսումնարանները, օգնեն քաղաքին չքաւոր ընտանեացը, որոնք իրանց չքաւորութեան պատճառով զրկում են իրանց որդեղը ուսումից: Եթէ կուբում, որտեղ ժողովում են տեղացիները, չեն մտածի, չեն խօսի այսպիսի օգտակար բաների վրա, ի հարկէ դուրսը աւելի չեն կարող, որովհետև ցրված են նրանք: Թէպէտ ցերեկով հրապարակի վրա էլ ժողովվում են և խօսում, բայց այդ խօսակցութիւնը աւելի անձնական է քան թէ ընդհանուր: Հրապարակ աւելով հասկանում ենք Շահվերդեանցների քարվանսարայի կտուրը, որտեղ ժողովվում են և զբոսնում, բայց այդ զբոսնելը աւելի մեծ է բերում, քան թէ օգուտ, որովհետև քարվանսարայում պահում են ձիաներ, որոնց աղբը ապակեանում է չըձայնաւորող օղբ:

Տեղացիները չունեն գրօսարան. սրանց գրօսարանն է յիշեալ Շահվերդեանցների քարվանսարայի կտուրը. եթէ Շահվերդեանցները կապեն այն կտուրը և արդեն մանգալ այնտեղ, ինչպէտք է անեն այն ժամանակ տեղացիները, այն ժամանակ կամ պէտք է տանը նստեն և կամ թափառեն փողոցները: Վաղուց է խօսակցութիւն կա շինելու մի բուլվար, գրօսարան, այգի, բայց այդ լոկ խօսք էր: Հասարակական ըզրօսարանի կարեւորութիւնը ունի Սղեանը, մանաւանդ կանանց և օրիորդների համար, որովհետև նրանք փակված կեանք են վարում: Եթէ փակված կեանք չը վարեն, քան թէ զբոսնան, որտեղ մանգան, մինչդեռ մանգալու տեղ չունեն. Բրանք բաւականաւոր են գնալ հրաւիրել և այնտեղ լոտո խաղալով ժամանակ անցկացնել: Կուբում երբ լինում են ընտանեկան երեկոյներ (պարահանդէսներ) շատ օրիորդներ չեն համարձակվում գնալու այնտեղ, որովհետև նախապաշարված ծնողները արգելում են նրանց: Այստեղ ամօթի և նախատիք են համարում եթէ մի ծանօթ երիտասարդ իր ծանօթ օրիորդի հետ խօսի. իսկայն կը բարձրանն սրանց:

Այստեղի կուբները անտէր են, ոչ որ նրանց վրա ուշադրութիւն դարձնող չը կայ. չը նայելով որ ամեն տարի ընտրում են ստաւր չինան եր, որոնք պէտք է հերթով ամեն օր վերակացութիւն անեն, բայց շատ անգամ նրանք բացաւայում են և կուբում յաճախ անհամաձայնութիւններ և աղաղակներ են լինում, երբեմն նոյն իսկ վերակացուի ներկայութեամբ են լինում և այդ վերակացուները այնքան թղլ են գտնվում,

որ չեն կարողանում այդ աղմուկներն առաջն առնել: Համարձակ կարող եմ ասել, որ մեր կը- լուքը կուր չէ, այլ տրակտիր, որտեղ պատահում են ամեն տեսակ անբաւականութիւն- ներ: Մարդը այստեղի կուրում կարող է բա- րոյապէս փշանալ, քան թէ դարգանալ:

Աւելորդ չենք համարում յիշել, որ անցեալ տարի ստորագրութիւն բացին և փող ժողովե- ցին այստեղ քաղաքային բանկ հիմնելու հա- մար, բայց մինչև այժմ բանկի մասին ոչինչ կարգադրութիւն չէ արած: Արդեօք ինչքան որ ժողովեցին, այն փողը բաւական չէ մի բանկ հիմնելու համար. եթէ բաւական չէ, ինչքան է հարկաւոր էլի, կամ ընդամենն որքան է ժողով- ված և կամ այն փողերը հւժ մօտ են գտնվում, — յայտնի չէ: Տեղեկութիւն ենք խնդրում այս մասին հասարակութեանը միամտացնելու հա- մար:

Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Այս օրերս հասաւ թիֆլիս երեկի ֆրանսիացի ձեռնածու, պ. Մարիուս Կասենուր (Marius Caseneuve): Նա յայտնի է ոչ թէ միայն ամբողջ Եւրոպայում, բայց և Ամերիկայում և երկրա- գնդին միւս մասերում: Ամբողջ ֆրանսիական մամուլը մեծ գովասանքով է խօսում պ. Կասենուրի ներկայացումները մասին, իսկ «Monde Illustré» պատկերազարդ շաբաթաթերթը իր սեպ- տեմբերի 14-ի համարի մէջ տպել է մինչև ան- դամ պարոնի պատկերը, նրա կենսագրութեամբ: Մի ճառի մէջ, որ պ. Կասենուր արտասանել է ֆարիքի Սօրբոնում, նա ասել է. «Ես կախարդ չեմ, բայց անկողնութեան վարժվել եմ ճարտի- կութեան մէջ. ես իմ կեանքին նպատակ դրել եմ երեք բանի դէմ պատերազմելու. սպիրիտիզ- մի, տգիտութեան և մոլեռանդութեան դէմ»: Նա միշտ իրան լիշտամի է յայտնել թղթախաղի, մենամարտութեան և այլ և այլ սնտոխաղաշու- թիւնների: Կասենուրը տուած է իր ներկայացում- ները Եւրոպայի բոլոր թագաւորների առջև և ունի ստացած բարձրագույն պատուանշաններ այլ և այլ կառավարութիւններից:

Հնորակալութեամբ ստացանք «Անախտ» հին գրոյց, գրեց Ղ. Աղայեանց: Տպված է թիֆլի- սում: Մովսէս Վարդանեանի տպարանում, ներ- կայ 1881 թւին: Գինը 50 կօպէկ է:

Հնորակալութեամբ ստացանք Բոտոյ (Գօնի վրա) քաղաքում պ. Յովհ. Տէր Արարատեանցից հրատարակված հայոց «Որացոյց» 1882 թւի հա- մար:

Որքան մեզ յայտնի է պ. Քիւրքեանի Անիի աւերակների գեղեցիկ ժողովածուին կարելի է գրվել թիֆլիսի Առետրական բանկում: Այդ ստեղծագործական ժողովածուի գինը 20 ռուբլ է: Վշտակի խմբագրութիւնն էլ, իր կողմից, առաջարկում է պ. Քիւրքեանին ընդունել իր մօտ ստորագրութիւն այդ ժողովածուի վրա: Յանկայողները կարող են մեզ ուղարկել 20 ռուբլ և իրանց հասցեն, որ տոմարով անմիջա- պէս կը հասնենք պ. Քիւրքեանին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԻՒՐԿԵԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԻՔԵՂԻՆԻՆԻՆԻ

Այս վերնագրով «Էսթրադ» լրագրի մէջ տպված է հետեւեալ յօդուածը:

Թիւրքաց Հայաստանի մէջ վերանորոգու- թիւններ մտցնելու հարցը վճռելու ժամա- նակ, որ այժմ հերթական է և բանակցու- թիւնների առարկայ է դարձել Բ. Գրան և պետութիւնների ներկայացուցիչների մէջ, երեւի՝ նկատի կառնվի այժմեան անբնական դրութիւնը բաւական քաղաքացիութեամբ առա- կան քիւրդ հասարակութիւնների, որոնք ապրում են Հայաստանի և Միսոպոտամիայի մէջ, այսպէս անուանված Քիւրդիստա- նում: մասամբ թիւրքիայի և մասամբ Պարս- կաստանի մէջ: Այդ պատճառով ներկա- յում անանձին ուշադրութեան արժանի

են տեղեկութիւններ այն նշանաւոր և ե- ռեւելի քիւրդ անձնաւորութեան մասին, որ երեւի մեծ ազդեցութիւն կունենայ ասիա- կան թիւրքիայի վիճակի վրա:

Մեր ընթերցողները ի հարկէ յիշում են այն անհանգստութիւնը, որ անցեալ տարի պատճառեց քիւրդերի արշաւանքը Պարս- կաստանի վրա շէյխ Իբրահիմի առաջ- նորդութեամբ, որ իրան քիւրդերի սրբազան առաջնորդ յայտնեց: Մի ժամանակ երկուդ էին կրում Ատրպատականի մայրաքաղաքի վիճակի համար, բայց բաղդաւորապէս պարսիկները շուտով կարողացան հաւաքել իրանց բոլոր պատերազմական ոյժերը, ա- զատել Ուրմիան և յաղթել շէյխին, որ փախաւ իր երկիրը:

Դրանից յետոյ շուտով քիւրդերի առաջ- նորդը պէտք է ընդունէր սուլթանի հրա- էւրը Կ. Պօլիս գնալու համար և հերքելու պարսկական կառավարութեանց նրա վրա բարձած մեղադրանքները: Ներկայումս շէյխ Իբրահիմի սուլթանի պատուաւոր հիւր է և բնակվում է նրա համար պատ- ըստած տանը Բեշիկտաշի մէջ, սուլթանի բնակարանի մօտ: Առաջ նա ընդունվեցաւ գերթէ թագաւորական պատուով, բայց յե- տոյ նրան մեկնեցին նրա իսկական դրու- թիւնը և այժմ շէյխը անհամբերութեամբ սպասում է մի դէպքի, որ ազատէր նրան պատուաւոր գերութիւնից: Իր ձանձրու- թիւնը փարատելու համար շէյխը ընդու- նում է լրագրական թղթակիցներին և ա- հա ինչ է գրում այդ թղթակիցներից մէկը անգլիական «Pall Mall Gazette» լրագ- րին:

Շէյխը մօտ 50 տարեկան տղամարդ է և նրա գծերը արդարացում են նրա կար- ծիքը: Թէ ինքը արաբական ազնիւ ծա- գումից է: Նա ապացուցանում է, թէ իր ծագումը սկսվում է մարգարէի աղջկանից և այդպիսով սրբութեան կողմից երրորդ անձնաւորութիւն է բոլոր մահմետականնե- ռի մէջ: Ինչպէս բոլոր իսկական բեղութեա- լարները փոքր և չոր է, նրա ամեն բանը յիշեցնում է անաստի իսկական որդուն, ինչպէս քնքշել և լաւ կազմված ձեռքերը և ոտքերը, նոյնպէս և շրջանաձև յօն- քերը, խորը նստած կրակոտ աչքերը, եր- կար, ուղիղ և մի փոքր ծոված քիթը և գլխի ամբողջ ձևը: Ոչ թէ ծագումը, այլ հանգամանքները նրան քիւրդերի առաջ- նորդ են դարձրել: Շէյխը առանձին նշանա- կութիւն տուեց իր ցանկութեանը, որ եւ- րօպական մամուլը ձգտելի տեղեկութիւն ունենայ նրա իսկական դրութեան մասին և նա կարծում է, թէ առանձին իրաւունք ունի անգլիացիների համակրութեան վրա, որովհետեւ նա, յարգելով Թաւրիզի անպիտ- կան գլխաւոր հիւպատոսի խնդիրը, որ այն ժամանակ պատահամբ Ուրմիայի մէջ էր, յետաձգեց իր արշաւանքը Թաւրիզի վրա, իբր թէ այն պատճառով, որ ժամանակ տայ այդ քաղաքի քրիստոնեայ ազգաբնա- կութեանը քաղաքից տալիս տեղ գնալ և այդպիսով նա զրկվեց մի միջոցի իր գրու- թիւնը պարսկական հողի վրա ապահովելու համար: Նրա աշխատանքները քրիստոնեա- ներին պաշտպանելու համար թէ իր ար- շաւանքի ժամանակ Պարսկաստանի վրա և թէ ռուս-թիւրքական պատերազմի ժամա- նակ, նրա կարծիքով, պէտք է ապահովին նրան քրիստոնեայ Եւրոպայի համակրու- թիւնը: Նրա պատմում է, որ իր արշաւա- նի պատճառը Պարսկաստանի վրա անձնա- կան փառասիրութիւնն էր, այլ նրա միակ նպատակն էր պաշտպանել իր հայրենա- կիցներին պարսկական իշխանութեան ձեռ- նից:

շուրջ, որ նրանց հալածում է իրրեւ օտար- ների թէ կրօնով և թէ ծագումով: Շէյխի խօսքերը թիւրքաց կառավարութեան ան- կարգութիւնների մասին չափաւորվում էին թիւրքաց երկու օֆիցերների ներկայու- թեամբ, որոնք Թափառում էին սենեակի մէջ, թէպէտ շէյխի սվիտայի մար- գիկը խորին յարգանքով ծնկաչոք նըս- տած բաւական հեռու էին պահում այդ օֆիցերներին: Շէյխը բարեկամաբար էր խօսում հայերի մասին, բայց առանձին ուշադրութիւն դարձրեց նրանց անչափաւոր պահանջների վրա առանձին արտօնութիւն- ներ ունենալու համար: Այստեղ շէյխի ան- գլխացի հիւրը համեստութեամբ յիշեցրեց հայերի մեղադրանքները քիւրդերի անգը- թութիւնների և բռնութիւնների մասին: Բայց շէյխը չէր կամենում խօստովանել, որ այդպիսի վրդովեցուցիչ դէպքեր շուտ շուտ պատահէին, ինչպէս պատմում են, և զրեթէ իրաւացի պատասխանեց, որ, եթէ քիւրդերը ծշմարիտ այնքան վատ են, ինչ- պէս նրանց նկարագրում են, դրա համար մասամբ մեղաւոր է Եւրոպան, որ միտի- նարներ է ուղարկում և ուսումնարաններ է բացում հայերի համար, ամեն դէպքում նրանց օգտին է գործում, մինչդեռ քիւր- դերը զոհ են դառնում տգիտութեան, որ ամեն տեսակ չարիքների աղբիւր է, և վատ կառավարութեան, որ նրանց հասցնում է չարագործութեան: Շէյխը անձնականապէս իր երկրի մէջ ուրախութեամբ կընդունէր Եւրոպական վարչական անձնաց և ուսու- ցիչներին, հաւատարմաց ինկուլ, որ նրանք իրանց աշխատանքի համար նոյնքան ա- ռատ ներթ կը գտնեն քիւրդերի մօտ, որ- քան և հայերի մօտ: Իր նամակի վերջում անգլիացի թղթակիցը կարծիք է յայտնում, որ թէպէտ շէյխ Իբրահիմի ցանկութիւն յայտնեց ձանապարհօրդել Եւրոպա և տե- ձամբ խօսակցել Եւրոպական քաղաքակա- նութեան առաջնորդների հետ, բայց նա իսկապէս ձգտում է շուտ վերադառնալ իր հայրենիքը և թէ նա նորից սուր մերկաց- նէ, այդ սուրբ ոչ թէ թէհրանի դէմ կը լի- նի ուղղված, այլ մի ուրիշ մայրաքաղաքի դէմ:

Մենք մեր կողմից չը գիտենք, թէ հե- տեւեալ անգամ ուժ հետ կը պատերազմի քիւրդերի սրբազան առաջնորդը, բայց ակ- ներեւ է, որ հայկական հարցը կանոնաորա- պէս լուծելու համար պէտք է ուշադրու- թիւն դարձնել այդ չափազանց հետաքր- քիր, նահապետական, հովիւ, աւագակ և անհանգիստ ժողովրդի վրա, որին բոլորու- վին չէ դիպել քաղաքակրթութիւնը և յի- շեցնում է նահապետական ժամանակները: Մեր սեփական սահմանների մէջ ապրում են մի քանի հազար քիւրդ ընտանիքներ: Նրանց մի քանի բարի և լաւ յատկութիւն- ները շնանալով են նրանցից, որոնք քիւր- դերի հետ յարաբերութիւններ են ունեցել: Յիշենք օրինակի համար Երեւանի նախկին գաւառապետ գնդապետ Կամարաբեկյանի յոգ- ուածները, որի իշխանութեան տակ շատ քիւրդեր են եղել և որը նրանց մասին ոգե-ւ րութեամբ էր խօսում: Բայց անկասկած քիւրդերը շատ վատ յատկութիւններ էլ ու- նեն, որոնք իրանց զրացութիւնը մշտա- ընակ բնակիչների հետ անյարմար են դարձ- նում: Այդ բոլոր վատ յատկութիւնների պատճառը գլխաւորապէս թափառական կեանքն է, որ չէ համապատասխանում ազ- դաբնականութեան ահագին մեծամասնու- թեան շահերին: մինչև անգամ այնպիսի երկիրներում, ինչպէս Պարսկաստանը և ա- սիական թիւրքիան, որոնք քաղաքակրթված

երկիրներ չեն կարող համարվել: Հետեւա- պէս գլխաւոր հօգուտ քիւրդերի վերաբերու- թեամբ պէտք է այն լինի, որ նրանց հա- մար կարելի լինի ընտելանալ մշտաբնակ կեանքի: Դրա հիմքը արդէն դրված է և այժմ փոքր-Ասիայի մէջ մի քանի քիւրդ ցեղեր կան, որոնք մշտաբնակ աշխատակ- կեանք են վարում: Քիւրդ ազգաբնակու- թեան թիւը Քիւրդիստանում, Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանների վրա, բաւա- կան հաւասարութեամբ է բաժանված այդ պետութիւնների մէջ. Թիւրքիայի մէջ 380,000 զանազան յիշերի քիւրդ ընտա- նիքներ կան, Պարսկաստանում 300,000: Հետեւեալ անգամ մենք կը խօսենք հայ- կական խնդրի ամենանշանաւոր բաժնի մա- սին, այսինքն հայերի անմիջական շահերի մասին, որոնք հին ժամանակներից փոքր- Ասիայի ահագին տարածութեան վրա խա- ղաղ և մշտաբնակ ազգաբնակութիւն են կազմում և այժմ ամենայն իրաւամբ ամե- նայաւաստի տարր են կազմում Եւրոպական քաղաքակրթութեան իսկական տարածո- յեր լինելու համար փոքր-Ասիայի միւս ժո- ղովորդների մէջ: Հասկանալի է, որ եթէ քիւրդերի շահերը անուշադիր չը պէտք է թողնել, ուրեմն խաղաղ քրիստոնեայ ազ- գաբնակութեան շահերը պէտք է աւելի էլ գնահատել:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, 28 սեպտեմբերի
Յօդով եմ որ դուք կարելի է տարակուսիլ թէ յարուցանելով տնտեսական խնդիրը Կ. Պօլիս լրագրիչների մէջ այն բուռը կիրպի- լինպէս այդ արեց ձեր աշխատակիցը, ինչպէս առաջուց իմանալ և աչքի առաջ ունենալ մի մեծ ըրակ, որին պիտի ենթարկվէր նախա- ձեռնութիւն առնողի ոչ միայն հասարակային պատիւը և վարկը, այլ ևս նորա բոլոր անձնա- կան արժանապատեթիւնը և ինքնասիրութիւ- նը: Այս, ճշմարիտ է, որ ես ունեի բարոյական նեցուկ և պատուաբար «Մշակը», բայց դա հե- լիք չէր, լինելով այնչափ հեռու, որ հազիւ թէ մի յօդուած՝ այստեղից իր գնալու դալու համար քօսան օրից ոչ պակաս ժամանակ կը պահանջէ: միւս կողմից էլ, որչափ էլ «Մշակը» ազդեցիկ և ուժով լինէր, դարձեալ նա այն նշանակութիւ- նը չէր կարող ունենալ այստեղի հասարակու- թեան համար, ինչ որ և է մէկը այստեղ հրա- տարակրթներից: Այս այսպէս լինելով, սակայն մի գաղտնի բնագործում և խզիլ պահանջ անդա- դար դրում էր ինձ թեքերս յետ ծաղիկ և գրա- կանական կուռի մղվել ամբողջ Կ. Պօլիս ինտել- լիգենցիայի դէմ կամ նորա սխալմունքները իրան հասկանալու և պարտաւորութիւնը հոյց տալու համար Հայաստանի ժողովրդի բարեկեցութեան վերաբերմամբ, կամ թէ ինքս յաղթվիլ ու հա- մոզվիլ թէ իմ սկսած պրօպագանդան շանդա- տակ է, «վաղահաս է», «երեւակայական է», «ա- նկողմնորոշելի է» և այլն: Կուռի գեւ սկզբում երբ ամեն կողմից բարեկամներ և հակառակորդ- ներ դու չը գիտէին թէ այս պրօպագանդան «Մշակը» փայտեցած և սրած առարկաներից մինն է, յանկարծ երեսցին «Մշակի» հինգ ա- ռաջնորդող յօդուածներ, որոնցով պարզ ի պար- ղոյ ցոյց տուաւ Գրիգոր Արծրունի Կ. Պօլիս աղգայիններին թէ իր աշխատակցի պահանջա- ները օղից վերցրած և ինքնահարկ բաներ չեն, այլ նոյնպէս իրան «Մշակի» խմբագրի խորք համոզմունքը և դաւանանքը: Երբեք այդ յօ- դուածները քիչ բան չը տեսան մի կողմից ձեր աշխատակցին նոր ոյժ և կորով տալու համար, միւս կողմից էլ հակառակորդների ինքնավստա- հեթիւնը և ֆանֆարօնութիւնը կտրտելու:

Բայց դժբաղդաբար հարցը սոցա համար չը կարողացաւ դարձնալ պարզվիլ և որոշվիլ, վասն- որոյ հարկաւոր եղաւ սկսել նոր շարք ուժգին հարուածների «Մանգոլ» միջոցով, որի համարձակ քննադատական ուղղութիւնը և կիր- քը արդէն ձեռ յայտնի է: Այդ օրից ընդդիմա- բան բանակի կենտրոնավայրը դառաւ «Մանգոլ», որի մէջ սկսեցին երեւալ յօդուածներ Երգրունից

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.